



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՉՄՇԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Չմշակված տվյալների հավաքում և պահպանում (փողոցային տեսախցիկներից, ինչպես նաև հանրային և մասնավոր անվտանգության տեսախցիկներից ստացված տեսանյութերը, հեռահաղորդակցական սարքերով գրանցված տվյալները, հանրային ռեգիստրները և արխիվները)

Ներածություն

Հանրության համար մատչելի տվյալների հավաքումը մի երևույթ է, որն արագորեն թափ է առնում փողոցային երթևեկությանը հետևող տեսախցիկների և հանրային ու մասնավոր անվտանգության համակարգերի տեղադրմանը, ինչպես նաև տեսախցիկներով սարքավորված բջջային հեռախոսների և սմարթֆոնների մասսայականացմանը զուգընթաց: Չնայած եվրոպական երկրների մեծամասնությունում կան գործող օրենսդրական ակտեր, որոնցով սահմանափակվում է նման տվյալների օգտագործումը, ոչ բոլոր երկրներն են բավարար մակարդակով անդրադառնում այս երևույթով պայմանավորված խնդիրների լուծմանը: Հայաստանի օրենսդրությունում, մասնավորապես, գրեթե բացակայում է չմշակված տվյալների հավաքման գործընթացը կանոնակարգող իրավական բազան: Չնայած այն բանին, որ փողոցային երթևեկության կարգավորման մասին վերջերս ընդունված օրենսդրական ակտերը իրավական հիմքեր են ստեղծում փողոցային տեսախցիկների միջոցով ստացված տվյալների օգտագործման համար, դրանք չեն սահմանում այլ նպատակներով տեսախցիկների օգտագործման կարգը, ինչպես նաև տեսանյութերի արխիվացման և այդ արխիվների օգտագործման հետ կապված պահանջները:

Տվյալների օգտագործման և ոչնչացման մեխանիզմների բացակայության պայմաններում պետական և մասնավոր կազմակերպությունների կողմից նույնիսկ օրինական հիմունքներով անձնական տվյալների հավաքումը կարող է բերել անձնական կյանքի անձեռնմխելիության ոտնահարման դեպքերի: Շատ հաճախ անհատները սեփական կամքով անձնական տվյալներ են տրամադրում պետական կամ մասնավոր հաստատություններին, առանց գիտակցելու՝ ունենալ արդյոք վերջիններս իրենցից նման տվյալներ հավաքելու իրավական հիմքեր: Այստեղ կարելի է առանձին նշել հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից հավաքվող այն տվյալները, որոնք տեխնիկապես չեն որակվում որպես «անձնական», սակայն պարունակում են մարդու անձնական կյանքին վերաբերող արժեքավոր տեղեկություններ:

Տեսահսկում

Տարածված է այն կարծիքը, որ տեխնիկական միջոցներով ստացված կամ սուբյեկտների կողմից կամավոր տրամադրված չմշակված տվյալների հավաքումը անձնական կյանքի անձեռնմխելիության առումով լուրջ խնդիրներ չի կարող առաջացնել: Ավելին, տարբեր իրավական համակարգերում, տեսահսկման միջոցով կամ ծառայություն մատուցողների կողմից կատարվող հարցումների միջոցով հավաքվող տվյալները չեն դիտվում որպես անձնական տվյալներ: Այդուհանդերձ, փողոցային տեսախցիկները ժամանակին հանրության մտահոգության և հանրային քննարկումների առարկա են դարձել, ինչի արդյունքում եվրոպական իշխանությունները պաշտոնական ուղեցույցներ են մշակել դրանց վերաբերյալ: Տեսահսկման խնդիրներին անդրադառնալիս անհրաժեշտ է հաշվի առնել տեսահսկման տարբեր կատեգորիաները: Եվրոպական

կանոնակարգերում սովորաբար տարբերակված մոտեցում է ցուցաբերվում տեսահսկման տարբեր համակարգերի՝ հանրային նշանակության, թաքնված տեսախցիկների, ինչպես նաև համայնքային կամ մասնավոր համակարգերի միջոցով ստացված տվյալներին:

Փողոցային տեսախցիկների հետ կապված հիմնական մտահոգությունը որպես կանոն վերաբերում է տեսահսկման շրջանակներին (օրինակ, ի՞նչն է մտնում այդ շրջանակների մեջ՝ միայն որոշակի ժամանակահատվածում կատարված որոշակի գործողությունները, թե՞ ցանկացած ժամանակին իրականացված ցանկացած գործողություն), տեսանյութերի պահպանման ժամանակահատվածին, տեսանյութերի արխիվներից օգտվելու իրավունք ունեցող անձանց, ինչպես նաև նման իրավունք ստանալու ընթացակարգերին: Տեսահսկման մասին նախագուշացնող տեղեկատվության տրամադրումը պարտադիր է գրեթե բոլոր եվրոպական երկրներում և պահանջվում է ինչպես պետական քաղաքականության մակարդակով, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտներում ընդունված արտադրական էթիկայի կանոնների մակարդակով: Կանոնակարգերով կարող են սահմանվել նաև հասարակական վայրերում տեսահսկում իրականացնելու նպատակները և համապատասխան սահմանափակումները:

Տեսահսկում իրականացվում է ոչ միայն պետական, այլ նաև մասնավոր հաստատությունների կողմից՝ անվտանգության և վերահսկողության նպատակներով: Շատ ընկերություններ, օրինակ, տեսախցիկներ են օգտագործում աշխատանքային պրոցեսին հետևելու կամ աշխատակիցների բացակայությունը աշխատատեղերից արձանագրելու համար: Որոշ ընկերություններում աշխատակիցները տեղեկացված են լինում տեսահսկման մասին, իսկ այլ ընկերություններում՝ ոչ: Նույնիսկ տեսահսկման համակարգի գոյության մասին տեղեկացված լինելու պարագայում, միշտ չէ, որ աշխատակիցներն իմանում են, թե որքան ժամանակ են պահվում տեսանյութերը, ով կարող է ստանալ դրանց պատճենները և սահմանափակված է արդյոք դրանց օգտագործումը ադմինիստրացիայի կողմից:

Տեսահսկման համակարգերի մասսայականացումից կարճ ժամանակ անց դրանց հետ կապված խնդիրները դարձան եվրոպական երկրների օրենսդիր մարմինների և ԵՄ ինստիտուտների քննարկման առարկա: Չնայած ԵՄ մակարդակով տվյալների պաշտպանության ներդաշնակեցված օրենսդրության ընդունմանը («Անձնական կյանքի անձեռնմխելիության մասին» ԵՄ թիվ 95/46/EC դիրեկտիվը), տեսահսկման հետ կապված հարցերի վերաբերյալ առանձին պետությունների մակարդակով մինչև «Անձնական կյանքի անձեռնմխելիության մասին» ԵՄ հիշյալ դիրեկտիվի ուժի մեջ մտնելն ընդունված ազգային օրենսդրական ակտերով սահմանված կանոններն այդքան էլ պարզ չէին, ինչպես կարող էին թվալ առաջին հայացքից: Մի շարք եվրոպական երկրներում (Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում) հանրային վայրերում տեսահսկում իրականացնելու համար պահանջվում է ստանալ թույլտվություն համապատասխան պետական մարմիններից՝ հանրային շահերի պաշտպանության կամ անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանության հիմնավորմամբ:

Տեսահսկման և անձնական կյանքի անձեռնմխելիության միջև կապն այդքան էլ ակնհայտ չէ: Տեսահսկման կողմնակիցների ամենաուժեղ փաստարկն այստեղ կայանում է նրանում, որ տեսագրությունը միշտ չէ որ բացահայտում է անձի ինքնությունը, այնինչ անձնական տվյալների բազային սահմանումը հիմնվում է անձի ինքնության բացահայտման գաղափարի վրա: Նման մոտեցումը կարող է լինել և՛ ճիշտ, և՛ սխալ՝ կախված գործող օրենքներից և տեսահսկման համակարգի տեխնիկական հնարավորություններից (անձի ինքնությունը բացահայտելու առումով): Ներկայումս CCTV¹ (փակ կոնտուրով տեսահսկման) համակարգերն ապահովում են շատ բարձր

¹ close circuit television

որակի տեսագրություն, իսկ պատկերների թվային մշակման ժամանակակից ծրագրերը թույլ են տալիս բացահայտել անձի ինքնությունը տեսագրության հիման վրա: Իհարկե սա նույնը չէ ինչ բիոմետրիկ և (կամ) կենսագրական տվյալների հավաքումը, սակայն այս խնդիրը կարող է շատ ավելի զգայուն լինել՝ հաշվի առնելով տեսահսկման մասշտաբները և քաղաքացիների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման հարցում բացվող հնարավորությունները:

Տեսահսկման պարագայում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման վտանգը չի սահմանափակվում միայն անձի ինքնության բացահայտմամբ: Տեսահսկումը մեծ հնարավորություններ է տալիս գրանցելու բազմազան տեղեկություններ անձի մասին, ինչպես օրինակ նրա ավտոմեքենայի պետհամարանիշը, շրջագայության ամենօրյա ուղիները, անձնական կապերը և անձնական կյանքին վերաբերող մի շարք այլ տվյալներ, որոնց ստացման համար որպես կանոն պահանջվում է դատարանի որոշում: Հանրային վայրերում իրականացվող տեսահսկման և թաքնված տեսախցիկով նկարահանման միջև սահմանն այնքան բարակ է, որ դատական քննություններում կողմերը երբեմն շարքեր են անց կացնում համոզելու համար դատարանին, որ տվյալ տեսագրությունը օրինական է կամ հակառակը՝ իրենից ներկայացնում է միջամտություն անհատի անձնական կյանքին:

Տարօրինակ չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք հայցեր է ստացել կապված CCTV համակարգերի միջոցով 8-րդ հոդվածի խախտման դեպքերի հետ: Այսպես, դեպքերից մեկում (Փերրին ընդդեմ Միացյալ Թագավորության), դատարանն արձանագրեց, որ հայցվորը գաղափար անգամ չի ունեցել այն մասին, որ իրեն նկարահանում են ոստիկանական բաժանմունքում և որ տեսանյութը կարող է հետագայում օգտագործվել դատական վարույթում որպես վկայություն իր դեմ: Ոստիկանության կողմից գործադրված խորամանկությունը դուրս է եկել տվյալ տեսակի տեսախցիկի օգտագործման թույլատրելի շրջանակներից՝ վերաճելով հայցվորի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման դրվագի: Ավելին, նախապես չտեղեկացնելով բերման ենթարկված անձին իր իրավունքների և հարցաքննության նկարահանման փաստի մասին, ոստիկանությունը խախտել է գործող օրենսդրության մի շարք այլ դրույթներ:

Թաքնված տեսախցիկների օգտագործումը, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների կողմից, նույնպես բուռն բանավեճեր է առաջացրել օրենսդիր մարմիններում՝ բաժանելով պատգամավորներին երկու խմբի՝ անհատների և կազմակերպությունների սեփականությունը ամեն գնով, այդ թվում՝ տեսահսկման միջոցով պաշտպանելու կողմնակիցների և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանների: Վերջիններիս դիրքորոշման հիմքում ընկած էր այն գաղափարը, որ ցանկացած միջամտություն մարդու անձնական կյանքին, նույնիսկ հասարակական վայրերում, պետք է կատարվի միայն նրա համաձայնությամբ:

Ռեգիստրներ, արխիվներ և հանրային ծառայություններ

Վարչական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելու համար հաճախ օրինական հիմունքներով անձնական տվյալներ են հավաքում: Օրինակ, տեղական մարմինները տվյալներ են հավաքում գույքահարկի ռեգիստրի համար: Իրենց նպատակին ծառայելուց հետո այդ տվյալները ենթակա են ոչնչացման: Այդուհանդերձ, գրառումների զգալի մասը պահվում է ոչ թե այն բանի համար, որ դա անհրաժեշտ է, այլ որովհետև չկան համապատասխան վերահսկման մեխանիզմներ: Հարկային և մաքսային հայտարարագրերը, տրանսպորտային միջոցների և գույքի այլ առարկաների ռեգիստրները, սոցապ և կենսաթոշակային ցուցակները հանդիսանում են հսկայական ծավալի անձնական տվյալներ պարունակող բազաներ, որոնք կուտակվել են

օրինական հիմունքներով և ենթակա են պահպանման որոշակի ժամանակ գրեթե բոլոր երկրներում՝ նույնիսկ առանց անհատների իմացության:

Արխիվն իրենից ներկայացնում է տվյալների պահպանման մի առանձնահատուկ համակարգ, որտեղ խաչվում են մի կողմից՝ անձնական տվյալների պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ տեղեկատվության ազատության հետ կապված բոլոր տեսակի օրենսդրական ակտերը: Եվրոպական երկրների մեծամասնությունում հանրային արխիվներում գործում է էթիկայի նորմերի վրա հիմնված միասնական կանոնադրություն, որն ուղեցույց է հանդիսանում արխիվի աշխատակիցների համար, երբ վերջիններս աշխատում են «տվյալների պաշտպանության մասին» օրենսդրությամբ պաշտպանվող անձնական տվյալներ պարունակող պատմական ինֆորմացիայի հետ: Այն երկրներում, որոնք համեմատաբար նոր են ընտրել ժողովրդավարության ուղին, այս խնդիրները կարող են ավելի խճճված լինել՝ արխիվները հանրության առջև բացելու հարցում իշխանությունների ցուցաբերած դժկամության պատճառով:

Հանրային ծառայություններ մատուցողների կողմից չմշակված տվյալների հավաքումը սովորական երևույթ է և հիմնականում կապված է ծառայություններից օգտվող անձանց ինքնության հաստատման հետ: Չնայած այս դեպքում հավաքվող տվյալները շատ բան չեն ասում անհատի անձնական կյանքի մասին, սակայն բավարար խորությամբ դրանք մշակելու դեպքում դրանցից կարելի է որոշակի տեղեկություններ քաղել տվյալ անձի ապրելակերպի մասին: Այսպես, օրական կտրվածքով էլեկտրաէներգիայի սպառումը (սա կարելի է ստանալ նոր սերնդի թվային հաշվիչներից) ցույց է տալիս, թե որքան ժամանակ է տվյալ անձն անց կացրել իր տանը այս կամ այն օրը և կոնկրետ որ ժամերին է եղել տանը: Ուղևորությունների մասին տեղեկատվությունը շատ բան կարող է ասել մարդու անձնական կյանքի (օր.՝ նախասիրությունների, շրջապատի) կամ նույնիսկ աշխատանքի բնույթի մասին: Երկար ժամանակահատվածի համար կուտակված տվյալները կարող են ցույց տալ, թե եկամտային որ խավին է պատկանում տվյալ անձը (ցածր, միջին, թե բարձր եկամուտ ունեցող), ինչպես նաև բացահայտել մի շարք այլ անձնական հատկանիշներ: Փոստային ծառայությունները կարող են տեղեկություններ պահել նամակներ և ծանրոցներ ուղարկող և ստացող անձանց մասին, ինչպես նաև՝ անձին առաքվող ապրանքների տեսակների և պարբերականների մասին:

Տեսականորեն, չօգտագործվող տվյալները (կամ հիմնական նպատակին չծառայող տվյալները) պետք է ոչնչացվեն, սակայն հանրային և կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են պահպանել այդ տվյալները և հիմնավորել դա միանգամայն օրինական փաստարկներով: Օրինակ, ծառայությունների դիմաց կատարված վճարումների պատմությունը կարող է օգտագործվել մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ բողոքներից պաշտպանվելու կամ նմանատիպ այլ բաների համար: Այս առումով, ծառայություններ մատուցողների մեջ հատուկ տեղ են զբաղեցնում վարկատու կազմակերպությունները, որոնք անհատների վարկային պատմությունները պահում են անսահմանափակ ժամանակ: Ինչպես եվրոպական, այնպես էլ ամերիկյան ֆինանսական շուկաներում արձանագրվել են հաճախորդների վարկային պատմությունները սահմանված կարգով գրառելու և արխիվացնելու հետ կապված մի շարք պրոբլեմներ, ինչպես նաև այդ տվյալներն այլ նպատակներով օգտագործելու հետ կապված սկանդալային դեպքեր:

Վարկատու կազմակերպություններ

Հայաստանը վերջերս նոր օրենսդրական դաշտ է ձևավորել վարկատու կազմակերպությունների գործունեության համար: Այդ օրենսդրությունը մեծ հնարավորություններ

է տալիս վարկատու կազմակերպություններին տեղեկություններ հավաքելու իրենց հաճախորդների մասին՝ առանց վերջիններիս որևէ այլընտրանք թողնելու:

Ընդհանուր առմամբ վարկային միություններն այն կազմակերպություններն են, որ բազմաթիվ ճարտարամիտ եղանակներով կարող են անհատներին անուղղակիորեն պարտադրել տվյալներ տրամադրել երրորդ անձանց: Տվյալների օգտագործման օրինականությունն ապահովելու համար նրանք գրավոր թույլտվություն են վերցնում անհատներից, որոնք առանձնապես մեծ այլընտրանք չեն ունենում նման թույլտվություն չտալու:

Մեկ այլ հարց է նաև այն, որ նման թույլտվություն տալիս անհատները չեն էլ իմանում, թե հետագայում իրենցից ինչ տեղեկություններ կարող են պահանջել վարկատու կազմակերպությունները: Շատ հնարավոր է, որ դա իմանալու դեպքում, մարդիկ նման թույլտվություն պարզապես չտային: Տեսականորեն, վարկային կազմակերպությունների մոտ պահվող անձնական տվյալների բազաների վրա տարածվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենսդրությունը, սակայն վարկային կազմակերպությունները կարող են հրաժարվել բազաներից ջնջել այլևս չօգտագործվող տվյալները՝ ընդամենը նշելով, որ այդ տվյալներն արժեքավոր են և ենթակա չեն ոչնչացման:

Առաջարկվող գործողությունները

- Քաղաքացիական հասարակությունը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի տվյալների կատեգորիաների սահմանմանը և նրան, թե տեսահսկման պետական կամ մասնավոր ո՞ր համակարգերի միջոցով ո՞ր կատեգորիայի տվյալներն են կարող գրանցվել և պահպանվել: Անհրաժեշտ է սահմանել նաև տվյալների պահպանման և օգտագործման կանոնները, ինչպես նաև առանց դատարանի որոշման դրանք երրորդ անձանց տրամադրելու կարգը:
- Քաղաքացիական հասարակությունը կարող է նաև օրենսդրական և ծրագրային առաջարկություններ ներկայացնել չմշակված տվյալներ հավաքելու և դրանք մշակելու գործընթացը կանոնակարգելու համար:
- Կարող է իրականացվել հատուկ ուսումնասիրություն վարկատու կազմակերպությունների կողմից անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման կամ վարկ տրամադրելու լծակը քաղաքացիներից անձնական տվյալներ կորզելու նպատակով չարաշահելու պոտենցիալ հնարավորությունները հայտնաբերելու համար:
- Հանրային վայրերում տեսահսկման համակարգերի չարաշահումներից անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշումների պատմության ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել Հայաստանի օրենսդրության համապատասխան բաժինները լրամշակելու գործում:

Հեղինակ՝ **Անդրանիկ Մարկոսյան**
Թվային իրավունքի փորձագետ
Էլ. փոստ՝ andranik@gmail.com
Մայիս, 2016

Այս վերլուծությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ: Վերլուծությունն արտահայտում է հեղինակի կարծիքը, որոնք կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ: